




ՄԱՍՆԱԳՅԱԾՈՒՄ • ՓՈՐՈՒ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2020 [1]
ԵՐԵՎԱՆ



ՍՈՍ ԽԱԶԻԿՅԱՆ

ՀՊՏՀ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան,
Կնյուսագիտության թեկնածու, դոցենտ

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ամբողջ աշխարհում վերջին տարիներին կրթական ծառայությունների արտահանումը ցուցաբերում է կայուն աճ: Տարբեր երկրներում նկատվող միտումները վկայում են, որ Կնյուսական աճը մեծապես կարող է պայմանավորված լինել կրթական ծառայությունների արտահանմամբ: ՀՀ-ում առկա գիտակրթական համակարգի ռեսուրսները հնարավորություն են տալիս իրականացնելու կրթական ծառայությունների արտահանում, սակայն դրա համար պեք է մշակել պեպակային քաղաքականություն՝ նպաստելով համապատասխան ակադեմիական խմբերի ձևավորմանը, բուհերի, ուղեղային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների և կրթական գործունեություն իրականացնող մասնավոր հատվածի միջազգայնացմանն ու այդ ուղղությամբ ներդրումների իրականացմանը: Քանի որ մեր հանրապետությունում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ), ինչպես նաև բնական գիտությունների, հատկապես՝ ֆիզիկայի գծով առկա են համեմատական առավելություններ, որոնք ընդգծված են միջազգային տարբեր հաշվեկալություններում, ապա այդ ուղղություններով միջազգայնացումը նպաստավոր դիրքավորում կարող է ապահովել ՀՀ կրթական ծառայությունների արտահանման համար:

Հիմնաբառեր. բարձրագույն կրթություն, գիտություն, ծառայություններ, արտահանում, կնյուսական զարգացում

JEL: I21, I25

Ներածություն: Միջազգային առևտրաշրջանառության ոչ նպաստավոր պայմաններ ունեցող երկրների համար ծառայությունների արտահանումը

արտաքին առևտրի զարգացման կարևոր պայմաններից է: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս համացանցով հասանելի կերպով արտահանելու ծառայություններ: Ընդ որում, միջազգային կրթական ծառայությունների մատուցումը նույնպես հնարավոր է զարգացնել ապրանքաշրջանառության ոչ նպաստավոր պայմանների դեպքում: Այս տեսանկյունից, կարևոր է կրթական ծառայությունների արտահանման հնարավորությունների դիտարկումը Հայաստանի Հանրապետության համար, քանի որ մարդկային կապիտալի առումով մեր երկիրը համեմատաբար մրցունակ, ավանդական «բրենդային» դիրք ունի միջազգային գիտակրթական հանրույթի շրջանում:

Կրթական ծառայությունների արտահանման համար շատ կարևոր է պետական քաղաքականությունը, որը պետության միջազգայնացման արդի գործընթացների համար կարող է բավականին կարևոր նախադրյալներ ապահովել: Այսինքն, կրթական ծառայությունների արտահանման ապահովումը ՀՀ-ի համար անհրաժեշտ է ոչ միայն արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների բարելավման, այլև պետության միջազգային հարաբերությունների զարգացման տեսանկյունից:

Գրականության ակնարկ: Հոդվածի շրջանակում օգտագործված գրականությունը հիմնականում վերաբերում է կրթական ծառայությունների արտահանմանն առնչվող տեսական նյութերին, Հայաստանի Հանրապետության տեխնոլոգիական ներուժին, ոչ ֆորմալ կրթության հնարավորություններին, վիճակագրական վերլուծություններին և միջազգային կառույցների հաշվետվություններին: Կարևորվել է նաև այն ոլորտի գրականության ուսումնասիրությունը, որը բարձրագույն կրթության համակարգից բացի, շեշտադրում է նաև այլ կառույցների ու կազմակերպությունների կողմից կրթական ծառայությունների մատուցման արդի միտումները: Մասնավորապես՝ *Կենիշի Օհնո*ն հիմնականում վերլուծել է Ճապոնիայի կրթության ու տնտեսական զարգացման միջև փոխկապվածությունները և ցույց է տվել կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման հետ կապված մի շարք ուղղություններ¹: *Սերգեյ Բելով*ն իրականացրել է IBM տեխնոլոգիաների և նորարարական լուծումների վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ առցանց համակարգում՝ գործնականում ցույց տալով ցանցային սկզբունքների և տեխնոլոգիաների վրա հիմնված կրթական ծառայությունների արտահանման հնարավորությունները²: «Հայաստանի տեխնոլոգիական ներուժի իրացում» Համաշխարհային բանկի խմբի 2020 թ. զեկույցում հանգամանակից ներկայացվում են ՀՀ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները, տարածաշրջանային երկրների նկատմամբ առավելությունները և ֆիզիկայի ոլորտում առկա միջազգային բարձր դիրքը՝ ներառելով առաջարկություններ կրթության զարգացման քաղաքականության վերաբերյալ³: ԱՄՆ առևտրի դեպարտամենտի (US Department of

¹ Ohno K., The Economic Development of Japan: The Path Traveled by Japan as a Developing Country, GRIPS Development Forum, 2006, էջ 23:

² U. Բելով, IBM համալսարանների հետ հարաբերությունների տարածաշրջանային ղեկավար, <https://news.am/arm/news/356523.html>:

³ Տե՛ս Հայաստանի տեխնոլոգիական ներուժի իրացում, Համաշխարհային բանկի զեկույց, 2020., թիվ AUS0001094, էջ 22:

Commerce) և Ավստրալիայի կառավարության «Միջազգային կրթության ծառայության» (Australian Government, International Education Service) հաշվետվություններում⁴ իրականացվել են հետաքրքիր վերլուծություններ կրթական ծառայությունների արտահանման վերաբերյալ, որոնք պարունակում են ինչպես մեթոդաբանական, այնպես էլ տեղեկատվական արդի մոտեցումներ:

Բարոս Ամմոնի և Թեյլոր Սքոթի հետազոտությունը⁵ վերաբերում է կրթական այնպիսի ծառայությունների մատուցմանը, որոնք դուրս են բարձրագույն կրթության ոլորտից: Նրանց աշխատանքն այն հետազոտությունների շարքից է, որոնք ցույց են տալիս կարճաժամկետ կրթական ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում: Այսինքն, հիմնավորում են այնպիսի տեսակետներ, ըստ որոնց՝ միայն բարձրագույն կրթության ոլորտում չէ, որ մատուցվում են կրթական ծառայություններ, և այդ առումով մեծանում է ուղեղային կենտրոնների, հասարակական կառույցների ու մասնավոր կազմակերպությունների դերը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեգրքեր և զեկույցներ, որոնց շրջանակներում ներկայացվել է օտարերկրյա ուսանողների, ուսման վարձավճարների և սպառողական գների վերաբերյալ տեղեկություն, որի հիմնական նպատակն է բացահայտել ՀՀ-ում օտարերկրացիների ուսման վերաբերյալ անհրաժեշտ որոշ ցուցանիշներ:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածի հիմնական նպատակը ՀՀ կրթական ծառայությունների ոլորտի համար արտահանման հնարավորությունների նախանշումն է՝ ուսումնասիրելով առկա իրավիճակը: Փորձ է արվել ներկայացնելու համակարգված քաղաքականության անհրաժեշտությունը՝ որպես ՀՀ-ում կրթական ծառայությունների արտահանման կարևոր ուղղություն: Ելնելով այս առաջնահերթություններից՝ հիմնականում կիրառվել է համեմատական ուսումնասիրությունների մեթոդը՝ շեշտադրելով միջազգային փորձի վերլուծությունը: Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են հիմնականում ոչ թե վիճակագրական ցուցանիշներ, այլ քաղաքականության մոտեցումներ, հետևաբար՝ գրականությունն ուսումնասիրվել է այդ շրջանակում: Օգտագործվել են նաև վիճակագրական ցուցանիշների համադրման մեթոդական առանձնահատկություններ: Վերլուծվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներ, տարբեր երկրների հաշվետվություններ, ուսումնասիրվել են ինֆոգրաֆիկներ և ելույթներ, որոնք վերաբերում են կրթական ծառայությունների արտահանմանն ու որակի բարելավմանը: Իրականացվել են նաև ոլորտի մասնագետների հետ ոչ ֆորմալ քննարկումներ՝ թեմային առնչվող ընդհանուր միտումները պատկերացնելու նպատակով: Նշված մեթոդների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտությունն առավելապես միտված է կրթական ծառայությունների արտահանման ոլորտում առկա քա-

⁴ St'u US Department of Commerce, International Trade Administration. 2016, Top Markets Report, Education: A Market Assessment Tool for US Exporters, May, 2016, figure 1, էջ 5:

⁵ **Amon B., Scott T.**, Think Tanks, Business and Civil Society: The Ethics of Promoting Pro-corporate Ideologies, Journal of Business Ethics, 2018, <https://link.springer.com/article/10.1007%2Fsl0551-018-4007-y>:

ղաքականության բարելավմանը: Քանի որ ՀՀ փորձն այդ ոլորտում բավականին փոքր է, վերլուծության ենթակա վիճակագրական տվյալներն ու հայեցակարգային մոտեցումները՝ համեմատաբար սակավ, ապա անհրաժեշտ ենք համարել շեշտադրել հատկապես քաղաքականության ուղղությունները:

Հետազոտության համար անհրաժեշտ մեթոդների ընտրության հարցում կողմնորոշիչ դեր է ունեցել հետևյալ հիմնական խնդիրների առաջադրումը.

- ուսումնասիրել կրթական ծառայությունների արտահանման ոլորտում առկա հիմնական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ՀՀ բուհական համակարգում օտարերկրյա ուսանողների ներգրավման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները և փորձը,
- ՀՀ հնարավորությունները վերլուծել կրթական ծառայությունների արտահանման տեսանկյունից և ներկայացնել առաջարկություններ:

Վերլուծություն: Տնտեսական առաջընթացի ներկա պայմաններում կրթության զարգացումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Գլոբալացման այժմյան մակարդակը և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացածության աստիճանը նպաստում են տարբեր երկրների միջև կրթական ծառայությունների ազատ տեղաշարժին, որն էլ կարևոր գործոն է այդ ծառայության արտահանման միջոցով տնտեսական աճ ապահովելու համար: Անհրաժեշտ է նշել, որ կրթական ու գիտական ծառայությունների ստեղծման ոլորտում աստիճանաբար կարևոր դերակատարներ են դառնում ուղեղային կենտրոնները, կարճաժամկետ ծրագրեր առաջարկող մասնավոր կառույցները և հասարակական կազմակերպությունները⁶: Հենց նրանք էլ կարող են դառնալ ոչ ֆորմալ կրթական ծառայությունների արտահանման կենտրոններ:

Կրթական ծառայությունների արտահանումը նպաստում է ոչ միայն սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարելավմանը, այլև հանդիսանում է միջազգայնացման կարևոր ցուցիչ: Ուսումնասիրելով ՀՀ մի շարք բուհերի ռազմավարական զարգացման ծրագրերը՝ մասնավորապես՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան⁷, Հայկական պետական մանկավարժական համալսարան⁸, Հայաստանի ազգային ագրարային համալսարան⁹, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան¹⁰, Երևանի պետական համալսարան¹¹, մասնավոր բուհերից՝ Ավանդական բժշկության համալսարան¹² և այլն, ակնհայտ է դառնում, որ միջազգայնացումը այս հաստատությունների գերակա նպատակներից մեկն է: Ավելին, դա բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար անհրաժեշտ պահանջ է: Սակայն ուսումնասիրելով այդ նույն բուհերի տարեկան հաշվետվությունները՝ կարելի է արձանագրել, որ բյուջեների ձևավորման մեջ միջազգայնացման արդյունքում ստացվող եկամուտները բավականին փոքր են: Այ-

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ <https://asue.am/upload/files/about/decisions-extracts-1/Razmavarakan%20cragir%202018.pdf>

⁸ https://aspu.am/website/images/website/docs/HPMH_RC%20%20FINAL.pdf

⁹ <https://anau.am/wp-content/uploads/2019/06/zargacman-razmavarakan-cragir2018-2022.pdf>

¹⁰ <https://polytech.am/file/2018/04/2016-2020.pdf>

¹¹ <http://ysu.am/uploaded/Kataroxakan-2017.pdf>

¹² <http://utm.am/images/post/1545113512.pdf>

սինքն, վերջին 4-5 տարիների ընթացքում միջազգայնացման ուղղությամբ ծախսեր կատարվել են, սակայն դեռևս ակնկալվող արդյունքները տեսանելի չեն հատկապես բյուջետավարման գործընթացում: Պետք է նշել, որ այս առումով պետական լիազոր մարմնի վերահսկողական գործառնությունները բավականին թույլ են, և բուհերի կողմից միջազգայնացման գործողությունները արդյունավետության տեսանկյունից գրեթե չեն գնահատվում՝ չնայած կատարվող մեծ ծախսերին:

Կրթական ծառայությունների արտահանումը կարևոր նշանակություն կարող է ունենալ հատկապես այնպիսի երկրների համար, որոնց տրանսպորտային հաղորդակցության համակարգերն արտաքին աշխարհի հետ լիարժեք կապակցված չեն և ունեն միջազգային առևտրաշրջանառության լուրջ խնդիրներ: Այդպիսի երկիր է նաև Հայաստանի Հանրապետությունը, որը տնտեսական շրջափակման մեջ է գտնվում երկու հարևան պետությունների կողմից: Հետևաբար, կարևորվում է արտահանման հիմնախնդիրների կարգավորումը՝ հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Հաղորդակցության տեխնոլոգիաները համաշխարհային տնտեսության մեջ այսօր լայնորեն օգտագործվում են նաև ծառայությունների մատուցման ոլորտում: Կրթական ծառայություններն ու հետազոտություններն այդ առումով լայն հնարավորություններ են՝ հանդես գալու որպես արտահանման ոլորտներ և ստեղծելու հավելյալ արժեք: Կրթության արտահանման ոլորտում տնտեսական մեծ առաջընթաց են արձանագրել Ավստրալիան, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան: Անհրաժեշտ է նշել, որ հետազոտության մեջ այս երկրների փորձի ուսումնասիրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք կրթական ծառայությունների արտահանման վերաբերյալ դրոյթներ են ամրագրել պետական քաղաքականության բարեփոխումների ծրագրերում և հետևողական աշխատանք են կատարում այդ ուղղությամբ:

Ավստրալիան 2014 թ. ունեցել է 17 մլրդ ԱՄՆ դոլարի կրթական ծառայությունների արտահանում¹³, որը կազմել է ՀՆԱ-ի շուրջ 1%-ը, ամբողջ արտահանման 5%-ը և ծառայությունների արտահանման 27%-ը¹⁴: Ավստրալիայի համար այդպիսի բարձր ցուցանիշը բացատրվում է կրթության մատչելիությամբ և բարեկեցիկ սոցիալ-տնտեսական պայմաններով: Պետք է նշել, որ այս ուղղությամբ պետությունն իրականացրել է հստակ քաղաքականություն, և տնտեսական ցուցանիշներ չեն արձանագրվել միայն կրթական հաստատությունների նախաձեռնությամբ: Այս համատեքստում, պետք է նշել՝ թեև ԱՄՆ-ում կրթական ծառայությունները և սոցիալ-տնտեսական պայմանները, Ավստրալիայի համեմատ, այնքան էլ մատչելի չեն, սակայն վերջին ժամանակներում ԱՄՆ-ը մշտապես ունեցել է արտերկրի ուսանողների ամենամեծ տեսակարար կշիռն աշխարհում. 2014 թ. ընդունել է այլ երկրներում սովորող ուսանողների 22%-ին: ԱՄՆ-ին հաջորդում է Մեծ Բրիտանիան, որի համա-

¹³ Այս ուսումնասիրության շրջանակում կրթական ծառայություն են համարվում միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական (հետազոտական), ինչպես նաև ոչ ֆորմալ կրթությունը:

¹⁴ Steu International Educational Services: Productivity Commission Research Paper. Australian Government, April 2015, էջ 21:

նման ցուցանիշը կազմել է 11%: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեպքում, ի տարբերություն Ավստրալիայի, այդ ցուցանիշի բարձր մակարդակը բացատրվում է կրթական ծառայությունների բարձր որակով: Սակայն այս երկրների դեպքում որոշիչ դեր ունի նաև նրանց ունեցած համաշխարհային տնտեսական և քաղաքակրթական նշանակալի դերը, որն ակնհայտորեն կարևոր հանգամանք է կրթության ոլորտի հետաքրքրությունների շրջանակում¹⁵:

Հավելենք, որ նմանօրինակ հետազոտությունների իրականացման պարբերականությունը մեծ չէ, և տվյալների բազայի ձևավորումը կապված է որոշակի խնդիրների հետ: Մասնավորապես, ԱՄՆ արտաքին առևտրի ցուցանիշների մեջ թեև նշվում է, որ 2018-2019 ուսումնական տարում այդ երկիրն ընդունել է արտերկրի շուրջ 1 մլն ուսանող և կրթական ծառայությունների արտահանման արդյունքում ապահովել է 46.54 մլրդ ԱՄՆ դոլար¹⁶, այնուամենայնիվ, այլ երկրների հետ համեմատական որևէ վերլուծություն չի ներկայացվում, որը բացատրվում է հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկություններով և այլ երկրներում նմանօրինակ ցուցանիշների՝ ոչ համադրելի լինելու հանգամանքով:

Կրթական ծառայությունների արտահանման ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական խնդիրների և հրապարակման ոչ մեծ պարբերականության մասին է վկայում նաև այն փաստը, որ այդպիսի ցուցանիշ հրապարակող առաջատար երկիրը՝ ԱՄՆ-ը, վերջին անգամ այն հրապարակել է 2018 թ.¹⁷, սակայն նույնիսկ այս հաշվետվության մեջ ներկայացված է 2016 թ. ցուցանիշ՝ մասնագիտական ծառայությունների արտահանման (կրթական ծառայությունների արտահանման գծով առանձին ցուցանիշը բացակայում է) 21%՝ ծառայությունների արտահանման ամբողջ ծավալի մեջ:

Գլոբալացման ժամանակակից միտումների պայմաններում կրթական ծառայությունների արտահանման շարժընթացի, դրանց հաշվարկման հետ կապված տեղեկատվական խնդիրների շրջանակներում 2019 թ. արդիական հետազոտություն են կատարել Ջ. Բեգինը և Բ. Պարկը¹⁸: Այդ հետազոտության մեջ, պայմանավորված վերոնշյալ խնդիրներով, վերջին ցուցանիշները վերաբերում են 2016 թվականին:

Ուսանողների միջազգային շարժունության հնարավորությունների մեծացմանը զուգընթաց, վերջին ժամանակներում տարեկան շուրջ 7%-ով ավելանում է արտերկրում սովորող ուսանողների թիվը, իսկ նրանց 83%-ը սովորում է G-20-ի երկրներում¹⁹: Այսինքն, տնտեսական ամենամեծ զարգացում ունեցող երկրներին բնորոշ է կրթության բարձր մակարդակ: Անհրաժեշտ է

¹⁵ Տե՛ս US Department of Commerce, International Trade Administration. 2016, Top Markets Report, Education: A Market Assessment Tool for US Exporters, May, 2016, figure 1, էջ 5:

¹⁶ <https://www.trade.gov/education-and-training-services-resource-guide-2020>

¹⁷ Տե՛ս Recent Trends in U.S. Services Trade: Annual Report 2018, էջ 28, <https://www.usitc.gov/publications/332/pub4789.pdf>:

¹⁸ Տե՛ս **Beghin J., Park B.**, The Exports of Higher Education Services from OECD Countries to Asian Countries, A Gravity Approach. 2019,

¹⁹ Տե՛ս OECD, Education at a Glance 2012, September 2012, 362–67. Ներկայացված հղմամբ վերլուծությունների շարքում (օրինակ՝ OECD, Education at a Glance 2019) ավելի թաքմ տեղեկատվություն կամ համադրելի վերլուծություն չկա, <https://www.oecd-ilibrary.org/docserver/f8d7880d-n.pdf?expires=1585516977&id=id&accname=guest&checksum=96F9496346D2F733C5EB26337EF54C8F>:

նշել նաև, որ այս երկրներում կրթական ծառայությունների մեջ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտներն ունեն ամենամեծ տեսակարար կշիռները:

Վերոնշյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական ծառայությունների արտահանման վերաբերյալ տեղեկատվական համակարգված բազան այնքան էլ մեծ չէ, միջազգային կազմակերպությունների հաշվետվություններն ու վերլուծություններն այս առումով հստակ պարբերականություն չունեն (պատճառները բազմազան են, օրինակ՝ կրթական ծառայությունների շրջանակներում մատուցվող այլ ծառայությունների բավականին մեծ տեսակարար կշիռը, կամ տարբեր երկրների կողմից հաշվարկվող մեթոդաբանության համաձայն՝ կրթական ծառայությունը զբոսաշրջային ծառայության մեջ ներառելը և այլն), հետևաբար, սույն հոդվածի կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ շեշտադրվել է ոլորտին վերաբերող քաղաքականության ուղղությունների նախանշումը՝ հիմնվելով միջազգային արդի միտումների և ՀՀ-ում առկա իրավիճակի վրա:

Կարծում ենք, որ ՀՀ-ում նույնպես կա ներուժ՝ ներդնելու համար գիտակրթական ու տնտեսական քաղաքականության այնպիսի համակարգ, որի կլաստերային մոտեցումներով ձևավորված բաղադրիչները հարաբերություններ կհաստատեն համաշխարհային գիտակրթական հանրության հետ՝ ապահովելով միջազգայնացում և տնտեսական զարգացում²⁰: Տնտեսական զարգացման և կրթության բարձր մակարդակի միջև կապն ակնհայտ դրսևորվել է նաև Ճապոնիայում, որտեղ տնտեսական զարգացման նախադրյալների մեջ ամրագրված է կրթության բարձր մակարդակը²¹: Հարկ է նշել, որ, ի տարբերություն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայում և Ավստրալիայում կրթական ծառայությունների արտահանումը սկսել է աճել ոչ թե զարգացման բարձր մակարդակ ունենալուց հետո, այլ այդ երկրների զարգացմանը զուգընթաց: Դա նշանակում է, որ հաջողվել է պետության զարգացման գերակայությունները զուգորդել կրթական ծառայությունների արտահանման ռազմավարության հետ, որի ուղղությամբ էլ կարելի է աշխատանք կատարել ՀՀ պետական քաղաքականության համատեքստում՝ հիմքում ունենալով կառավարության ծրագիրը:

Ներկայացված, ինչպես նաև այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ գիտակրթական համակարգը և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաները (S<S) որոշիչ են տնտեսության զարգացման համար²²: Սակայն, պետք է նշել, որ մասնագետների կարծիքով՝ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաները կրթական համակարգին ուղղված որո-

²⁰ Տե՛ս **Ս. Խաչիկյան**, Գիտակրթական կլաստերների ստեղծումը որպես անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունների ինտեգրացիայի և տնտեսական զարգացման միջոց, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, 2015, էջ 135-136:

²¹ Տե՛ս **Ohno K.**, The Economic Development of Japan: The Path Traveled by Japan as a Developing Country, GRIPS Development Forum, 2006, էջ 23:

²² Տե՛ս **Ս. Խաչիկյան, Ա. Առաքելյան**, Հանրային կառավարման առանձնահատկությունները տնտեսության զարգացման համատեքստում՝ գիտելիքի տարածման ցանցային համակարգի պայմաններում, Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով, 2014, էջ 174:

շակի մարտահրավեր են, քանի որ այդ ոլորտը զարգանում է շատ ավելի արագ, քան կրթական համակարգը²³: Դա նշանակում է, որ ՏՀՏ ոլորտում կարող են ձևավորվել ոչ ֆորմալ կարճաժամկետ կրթական ծրագրեր: Այս ուղղությամբ Հայաստանի համեմատական առավելությունները, հարակից մի շարք երկրների համեմատ, ներկայացված են սույն հոդվածում:

Գիտակրթական համակարգի միջոցով տնտեսական զարգացում ապահովելու, հետագայում նաև այդ ոլորտի արտահանումը խթանելու տեսանկյունից մեր հանրապետությունում առկա են նպաստավոր պայմաններ: Նախևառաջ դա պայմանավորված է կրթության մատչելիությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական ծառայությունների արտահանման համար որակից բացի, կարևոր նշանակություն ունի նաև այդ ծառայությունների մատչելիությունը և ուսանողներ ընդունող երկրների սոցիալ-տնտեսական վիճակը: Հայաստանի Հանրապետությունն այդ առումով գտնվում է նպաստավոր դիրքում, քանի որ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների վճարովի հիմունքներով ուսանողների շուրջ 70%-ի վարձավճարները 2018/2019 ուսումնական տարվա ընթացքում կազմել են 201-500 հազ. դրամ²⁴, ինչպես նաև սպառողական գների համատեքստում²⁵ համեմատաբար մատչելի են ապրուստի ծախսերը: Սակայն արտասահմանցի ուսանողներ ու հետազոտողներ ընդունելու համար անհրաժեշտ է ապահովել նաև այլ պայմաններ: Առաջին հերթին, դա վերաբերում է կրթական ծրագրերին և դասավանդողներին: Հարկ է նշել, որ ՀՀ պետական ու մասնավոր բուհերի կողմից օտարերկրյա ուսանողների ներգրավման առումով արդեն իսկ առկա են որոշակի նախադրյալներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բարձրագույն կրթության ոլորտի օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ-ում 2018/2019 ուստարում՝ պեղական և մասնավոր ուսումնական հասպարություններում²⁶

	Ընդունվածներ 2018	Ընդամենը 2018	Այդ թվում՝ վճարովի
Պետական	657	2909	2379
Մասնավոր	530	1370	1370
Ընդամենը	1187	4279	3749

Աղյուսակում ներկայացված ցուցանիշներում մեծ տեսակարար կշիռ են կազմում հիմնականում ՌԴ-ից, Վրաստանից, Սիրիայից, Իրանից, Լիբանանից և Մերձավոր Արևելքի այլ երկրներից Սփյուռքի մեր հայրենակիցները: Սակայն պետք է շեշտել, որ այս երկրների ուսանողները սովյալ երկրների քաղաքացիներ են և, վերադառնալով իրենց երկրներ, կարողանում են աշ-

²³ Տե՛ս **Ս. Բելով**, IBM համալսարանների հետ հարաբերությունների տարածաշրջանային ղեկավար, <https://news.am/arm/news/356523.html>:

²⁴ Տե՛ս ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., ՀՀ վիճակագրական կոմիտե, տարեկան զեկույց, էջ 227:

²⁵ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, տարեկան տեղեկագիր, էջ 251:

²⁶ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեկան զեկույցի սվյալների հիման վրա, էջ 229, 237:

խատել ՀՀ բուհական համակարգում ստացած ավարտական փաստաթղթերով և կրթական վերջնարդյունքներով: Այսինքն, եթե արդեն իսկ հաստատված հարաբերություններ կան բարձրագույն կրթական ծառայությունների արտահանման առումով, ապա դրա հետագա զարգացման համար անհրաժեշտ է մշակել քաղաքականություն և ռազմավարական մոտեցումներ, որոնք այսօր պետական մակարդակով գրեթե բացակայում են: Դժվար է, իհարկե, գնահատել, թե համապատասխան քաղաքականությունն օտարերկրյա ուսանողների ինչ ներհուք կապահովի, սակայն ակնհայտ է, որ եթե բոլոր բուհերն իրենց զարգացման ռազմավարությունների մեջ էական տեղ են հատկացնում միջազգայնացմանը, ապա պետական քաղաքականությունն այս առումով պետք է նպաստավոր լինի:

Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն՝ 2018 թ. միջուկային և բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառներին (այսինքն՝ քվանտային ֆիզիկայի առանցքային հարակից ճյուղերին) վերաբերող մեջբերումների թվով Հայաստանը 2018 թ. աշխարհում զբաղեցրել է 25-րդ տեղը (SJR, 2019)²⁷: Նույն զեկույցում նշվում է նաև. «Հայաստանի SCS արտահանումների կատարողականն ավելի լավ է՝ համեմատած փարածաշրջանային որոշ մրցակիցների հետ, այդ թվում՝ Ղազախստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի հետ: Ընդ որում, մեկ շնչի հաշվով համեմատության դեպքում Հայաստանը գերազանցում է գլոբալ SCS ծառայությունների ոլորտում հսկա մրցակիցներին՝ Չինաստանին և Հնդկաստանին»²⁸: Կարծում ենք՝ քանի որ վերոնշյալ երկրների շրջանակում Հայաստանը որոշակի առավելություններ ունի SCS արտադրանքի և ծառայությունների արտահանման մեջ, ապա առկա են բավականին նպաստավոր պայմաններ նաև այս ոլորտի կրթական ծառայությունների արտահանման առումով՝ մասնավոր կառույցների կողմից մշակվող ոչ ֆորմալ ծրագրերի տեսքով: Սրանք գործոններ են, որոնք բնորոշում են որոշակի ոլորտներում ՀՀ առավելությունները և այդ ուղղություններով պետական քաղաքականության իրականացումը, որի արդյունքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն կրթական ծառայությունների արտահանման շրջանակներում:

Կրթական ծրագրերն ու դրանց համապատասխանող նյութերն այսօր մեծ տարածում ունեն համացանցի բաց շտեմարաններում (massive open online courses (MOOC)): ՀՀ բուհական համակարգի, նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրեր մատուցող կառույցների խնդիրն է այդ նյութերից ստեղծել արտահանման չափանիշներին համապատասխան կրթական ռեսուրսներ: Այստեղ մեծապես կարևորվում է արտերկրի գործարար միջավայրի հետ հարաբերությունների հաստատումը, որովհետև բարձրագույն կրթության առաջատար համալսարանների կրթական ծրագրերը հիմնականում կառուցված են այնպես, որ ուսանողներն իրենց կրթական ծառայությունների շուրջ 50%-ն ստանում են ոչ թե բուհում, այլ նրա հետ պայմանագիր ունեցող կազմակերպություններում: Ըստ էության, դա կարող է նպատակահարմար լինել նաև արտասահմանցի ուսանողի համար, ով կարող է ուսումնառության մի մասն

²⁷ Տե՛ս Հայաստանի տեխնոլոգիական ներուժի իրացում, Համաշխարհային բանկի զեկույց, 2020., թիվ AUS0001094, էջ 22:

²⁸ Նույն տեղում, էջ 3-4:

անցկացնել իր երկրում, եթե մեր երկրի բուհերը պետական քաղաքականության աջակցությամբ կարողանան իրականացնել այնպիսի ռազմավարություն, որի դեպքում հնարավոր կլինի ուսանողներ ներգրավել այն երկրներից, որոնց գործարար միջավայրի հետ մեր բարձրագույն կրթական հաստատություններն ունեն համագործակցության շրջանակներ: Այս առումով Իրանը, ԵԱՏՄ և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ կարող են լավագույն լուծումները հանդիսանալ, քանի որ արդեն իսկ առկա է համագործակցության որոշակի փորձ: Այդպիսի հնարավորությունները կարող են մեծանալ միջազգային ծրագրերում ընդգրկվելու միջոցով, որոնք առավել արդյունավետ կարող են իրականացվել միջազգայնորեն ճանաչված ուղեղային կենտրոնների (օրինակ՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի²⁹) և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Միջազգային հարաբերությունների ընդլայնման համար կարևոր ուղղություն կհանդիսանան նաև դասավանդող անձնակազմի վերապատրաստումները:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ կրթական համակարգում առկա որոշ ռեսուրսները (հատկապես՝ ֆիզիկայի և ՏՀՏ ոլորտներին վերաբերող) և համաշխարհային տնտեսության զարգացման միտումները նպաստավոր են կրթական ծառայությունների արտահանման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու առումով: Սակայն, դրա համար պետք է իրականացնել հստակ պետական քաղաքականություն, որի հիմքում պետք է լինեն հետևյալ ռազմավարական ուղղությունները:

- ՀՀ պետական բուհերում վերապատրաստումների միջոցով միջազգային կրթական ծրագրերի ներդրմանը, կառավարմանը և ուղեղային կենտրոնների ստեղծմանը (որպես տիպային օրինակ կարելի է դիտարկել ՀՊՏՀ-ում գործող «Ամբերդ» հետազոտական կենտրոնը) տիրապետող ակադեմիական խմբերի ստեղծում: Սա հրատապ լուծում պահանջող ռազմավարություն է, քանի որ համակարգված գործող խմբերի առկայությունն այս ոլորտում գրեթե բացակայում է: Այս գործընթացի միջոցով հնարավոր է ստեղծել միջազգային պահանջարկ ունեցող այնպիսի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր, որոնք ՀՀ բուհական համակարգում ներդնելու դեպքում կմեծանան արտերկրի գործարար միջավայրի հետաքրքրությունները՝ համագործակցելու ՀՀ բուհերի հետ:

- ՀՀ գիտակրթական հաստատությունների կողմից հարաբերությունների հաստատում այլ երկրների գործարար միջավայրի և կրթական հաստատությունների հետ: Դա հնարավորություն կտա մեր երկրի համեմատաբար էժան աշխատանքային ռեսուրսները (գիտաշխատողներ) և կապիտալը (շենքեր, շինություններ, լաբորատորիաներ, հետազոտական կենտրոններ) օգտագործել տեղում՝ այլ երկրների համար պատրաստելով համապատասխան մասնագետներ՝ այդ երկրներից ժամանած ուսանողներին կրթական ծառայություններ մատուցելու միջոցով (այս գործընթացի մշակման համար ելակետ կարելի է համարել աղյուսակ 1-ում ներառված ցուցանիշների և դրանց սկզբնաղբյուրների վերաբերյալ տեղեկատվության ավելի լայն վերլուծությունը՝ ըստ երկրների):

²⁹ <https://asue.am/am/news/asue-amberd-research-center-is-one-of-the-best-university-brain-centers-in-the-world>

• ՀՀ կրթության և գիտության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող լիազոր մարմնի նախաձեռնողականության բարձրացում՝ ՀՀ Կառավարության ծրագրում գիտակրթական համակարգի միջազգայնացման ուղղությամբ: Մասնավորապես, եթե կառավարության ծրագրով զարգացման գերակա ուղղություններ են համարվում, օրինակ, հանքարդյունաբերությունը կամ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որի արդյունքում այդ ոլորտներում գործող կազմակերպությունները ստանում են պետական որոշակի աջակցություն, ապա կարելի է այդ աջակցության շրջանակներում պարտավորեցնել իրենց ոլորտներին վերաբերող կրթական ծառայությունների արտահանման ուղղությամբ աշխատանքների կատարում՝ բուհական համակարգի ներգրավմամբ:

• ՀՀ հասարակական կազմակերպություններին և գիտափոր արդյունք թողարկող մասնավոր կազմակերպություններին միջազգային ծրագրերում ներգրավմանն ուղղված պետական քաղաքականությամբ (հատկապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ): Եվրամիության, ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության հետ ձևավորված միջպետական հարաբերությունները կրթության և գիտության ոլորտում ՀՀ քաղաքացիական հասարակությանը ու մասնավոր կազմակերպություններին հնարավորություններ են տալիս ընդգրկվելու բազմաթիվ կրթական ծրագրերում: Սակայն ընդգրկվածության մակարդակը բավականին ցածր է, իսկ այդպիսի կառույցների կարողությունները, այդ ոլորտում առաջընթաց արձանագրելու առումով, թույլ են:

Ըստ էության, ՀՀ գիտակրթական հաստատությունների, ուղեղային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի բարեփոխումների միջոցով կրթական ծառայությունների արտահանում ապահովելու նպատակով անհրաժեշտ է երկու հիմնական պայման. այդ կազմակերպությունների զարգացման ռազմավարության մեջ պետք է գերակայի միջազգայնացումը, և անհրաժեշտ է, որ նրանք ոչ թե ծախսեր կատարեն այդ ուղղությամբ (ինչպես այժմ ՀՀ բուհական համակարգում է), այլ՝ ներդրումներ՝ նշելով միջազգային կրթական ծրագրերի ներդրման չափելի արդյունքներ, դրա արդյունքում՝ բյուջետային մուտքերի պլանավորման ցուցանիշներով և ակնկալելով պետական քաղաքականության աջակցություն:

Եզրակացություններ: Կրթական ծառայությունների արտահանումը մի շարք երկրների համար ապահովում է ՀՆԱ-ի նշանակալի ծավալ: Հատկանշական է, որ դա հիմնականում իրականացնում են զարգացած երկրները: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ճապոնիայում և Ավստրալիայում կրթության արտահանումն իրականացվել է տնտեսության զարգացմանը զուգահեռ, այսինքն՝ երբ դեռևս տնտեսությունը գտնվում էր զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա: Դա նշանակում է, որ նշված երկրներում արտահանման այդ ուղղությանը ձեռնամուխ են եղել ոչ թե զարգացման բարձր մակարդակ ապահովելուց հետո, ինչպես ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, այլ զարգացմանը զուգընթաց: Ըստ էության, Ճապոնիայում և Ավստրալիայում կրթության արտահանմանն ուղղված քաղաքականությունը զուգորդվել է պետության զարգացման քաղաքականության հետ, որը, մեր կարծիքով, անհրաժեշտ է իրագործել նաև Հայաստանի Հան-

րապետությունում: Սակայն մեր երկրում, նախևառաջ, պետք է միջազգայնացվեն կրթական չափանիշները, ուժեղացվեն գիտակրթական հաստատությունների, ուղեղային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների և կրթական ծառայությունների արտահանման հնարավորություն ունեցող մասնավոր հատվածի միջազգայնացմանն ուղղված ռազմավարությունները, այնուհետև, պետության զարգացման գերակայությունների մեջ ամրագրվեն կրթական ծառայությունների արտահանման դրույթներ:

ՀՀ պետական քաղաքականության մեջ միջազգայնացմանն ուղղված գործողությունները պետք է նպաստեն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ստեղծման պայմանների ապահովմանը՝ նաև հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածում գործող կառույցների համար:

Կրթական ծառայությունների արտահանման մեջ նշանակալի դեր կարող են ունենալ ՀՀ բուհերը՝ պետական քաղաքականության շրջանակներում համագործակցելով տնտեսության զարգացման ոլորտներում գերակայություններ ունեցող կազմակերպությունների հետ: Այս դեպքում բուհերը պետք է հստակ քաղաքականությամբ այդ կազմակերպությունների հետ իրականացնեն ներդրումային ծրագրեր՝ ամրագրելով միջազգային աղբյուրներից բյուջետային մուտքերի ապահովման որոշակի ցուցանիշներ:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Վրաստանի, Իրանի, ԵԱՏՄ և Մերձավոր Արևելքի երկրների հետ ավելի սերտ գիտակրթական հարաբերությունների հաստատմանը, քանի որ, կատարված ուսումնասիրությունների համաձայն, ՀՀ-ում առկա են համադրելի պայմաններ, ինչպես նաև փորձ՝ դեպի այդ երկրներ կրթական ծառայություններ արտահանելու համար:

Օգտագործված գրականություն

1. Բելով Ա., IBM համալսարանների հետ հարաբերությունների տարածաշրջանային դեկավար, <https://news.am/arm/news/356523.html>:
2. Խաչիկյան Ա., Առաքելյան Ա., Հանրային կառավարման առանձնահատկությունները տնտեսության զարգացման համատեքստում՝ գիտելիքի տարածման ցանցային համակարգի պայմաններում, Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողով, 2014:
3. Խաչիկյան Ա., Գիտակրթական կլաստերների ստեղծումը որպես անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունների ինտեգրացիայի և տնտեսական զարգացման միջոց, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, 2015:
4. ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., ՀՀ վիճակագրական կոմիտե, տարեկան զեկույց:
5. Հայաստանի տեխնոլոգիական ներուժի իրացում, Համաշխարհային բանկի զեկույց, 2020, թիվ AUS0001094:

частного сектора, работающих в сфере создания знаний, в том числе и инвестиции в эти сферы.

Ключевые слова: *высшее образование, наука, услуги, экспорт, экономическое развитие.*

JEL: I21, I25

SOS KHACHIKYAN

*Dean of Computer Science and Statistics Department at ASUE,
PhD in Economics, Associate Professor*

Problems of Export of Education Services of the RA. – In the whole world, the export of educational services in the field of higher education demonstrates a sustainable growth in the last decade. The trends of many countries show that the economic growth may be largely conditioned by export of educational services. The existing scientific-educational resources of the RA enable to provide export of education and for this purpose, the development of certain state policy is necessary to promote the establishment of relevant academic groups, as well as internationalization of, and investment in higher educational institutions, think tanks, civil society organizations and private sector organizations working in the knowledge creation. Since there are comparative advantages in our country in the fields of information and communication technologies, as well as natural sciences - especially in physics, which are highlighted in various international reports - internationalization of these directions can provide a favorable position for export of educational services for Armenia.

Key word: *higher education, science, services, export, economic development.*

JEL: I21, I25